

Թիւ 27224  
Մարտ 12, 1981

Բարեշնորհ  
Յակոբ Սրկ. Տէմիրճեան  
Գլխավէնտ.

Սիրելի Յակոբ Սարգսաւազ,

Ստացած ենք Փետրուար 11, 1981 թուակիր ձեր նամակը, որով  
դիմում կը կատարէք եկեղեցական կրթութիւն ստանալու համար:

Որպէս զի պաշտօնապէս նկատի առնենք ձեր դիմումը՝ համեցէք  
մեզի դրկել ձեր կենսագրականը, վերջին լուսանկարէն երկու օրի-  
նակ, դպրոցական վկայականներու օրինակները, ինչպէս նաեւ առան-  
ձին էջի մը վրայ բացատրել թէ ի՞նչ է պատճառը որ կը փափարիք  
եկեղեցական ասպարէզ ընդգրկել, ինչպէ՞ս կը խորհիք որ ձեր ծա-  
ռայութիւնը պիտի արդիւնաւորուի հայ-ամերիկեան ընկերութեան  
մէջ եւ ի՞նչ դժուարութիւններ կը տեսնէք ձեր ծառայութեան ար-  
դիւնաւորման ծամբոսն մէջ:

Վերոյիշեալները ստանալէ ետք մեզի պիտի տեղեկացնենք մեր  
որոշումը եւ ձեր առնելիք յաջորդ բայլերը:

Ձեզի կը մաղթենք առաւել բաջառողջութիւն եւ յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՅԳԻՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ